# ԱՂԱՂԱԿ ՈՂԲՈՑՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Եկայք առ իս լերինք համայն,
Ծովք, գետք, բլուրք համանգամայն
Դուք ողբակիցք եւ սգաւորք
Ո՛ն ինձ լերուք միանգամայն։

Զարթի՛ր, զարթի՛ր քաջդ Որփէոս
Դուժես 'ի քնարդ, շարժես 'ի յողբս
Զերկինս ամպովք ըզծովս ալեօք
Լալ եւ կոծել զաղէտ ցաւոյս։

Վա՜յ կարդացէք ինձ, սանդեայք,
Հարսունք, փեսայք, կուսանք, ողջոյք,
Եւ ողբացէք զորդեկորոյս
Զմայրս Հայաստան, արք եւ կանայք։

Զի մայր էի ես գիւցազանց,
Ծնող, դայեակ քերթողահարց,
Թագաւորաց եւ իշխանաց,
Նախարարաց Հայոց մեծաց։

Շնչէ Զեփիւռն ազնուական,
Խոխոջէն գետք բազմականեան,
Յորս սնուցի բիւր զօրավէտս
Զօրս անհամարս պարթեւական։

Զարս անուանիս անյաղթական,
Հսկայք եւ վէհք մէն սոսկականք.
Արովք, նետիւք եւ աղեղամբք,
Ամէն ուրէք էն յաղթական։

Աւա՜ղ նախանձ, ատելութիւն,
Հեռ, դաւ, երկաթ, անմիութիւն.
Զորդիս, թոռունս եւ ձախութիւնս,
Աւար հարին 'ի գերութիւն։

Ո՛հ, զաւակունքս կսկծալին,
Անջատեցան յոյժ լալագին.
Ի հարազատ իմոց գրկաց,
Յազգաց Պարսից եւ Թաթարաց։

Երիտասարդք, կուսանք, հարսունք,
Առնականայք, ծերք եւ մանկունք.
Ընդ ամենայն ծագս տիեզերց,
Անդարձ տարան 'ի գերողաց։

Ցաւք եւ աղէտք իմ բիւրաւոր,
Ամք տրտմութեանս հազարաւոր.
Սահին զի դարք, սահին տարիք,
Դեռ ես տրտում եւ սգաւոր։

Նժդեհութիւնն Իսրայելին,
Զոր պանդխտեաց Եգիպտոսին.
Չորեք հարիւր եւ քառասուն,
Ամք չափեցան անդրէն դարձին.

Եւ գերութիւնն 'ի Բաբելոնի,
Ամս թուով եօթանասուն,
Ապա դարձան յոյժ խնդութեամբ
Ի հայրենիս ուրախութեամբ.

Իս գերութիւն իմ որդեկաց,
Անդարձ մնաց ամաց բազմաց,
Կարօտ տեսոյս իմ մայրենի,
Հալեալ մաշեալ 'ի սփիւռս ծագաց.

Լամ, հառաչեմ անմխիթար,
Հանգոյն այրւոյ յար անդադար,
Սակայն 'ի զուր եւ անօգուտ,
Ուստէք չկայ ցաւոյս մի ճար.

Փող, գաւազան, թագ ծիրանի,
Եւ տէրութիւնն իմ արքունի.
Բարձան յինէն, ափսո՛ս անդարձ,
Որք եւ տուան օտար ազգաց։

Շքեղափայլ իմ արքունիք,
Քաղաքք եւ գիւղք, եկեղեցիք,
Ունայն թափուր 'ի մարդկանէ,
Ուր արդ ճեմեն ջղջիկք ոզնիք.

Բարէ, զիա՞րդ սիրտ, լեարդ մարդոյ
Տոկ ունիցին այսչափ ցաւոց.
Թէ եւ իցեն անդամանդեայ,
Սիրտք եւ աղիք, եւ լեարդ կճեայ.

Ո՛վ դու Աստուած իմ երկնաւոր,
Ամենայն ինչ քեզ հնարաւոր,
Բա՛ւ, արդ գթա՛ յիս եւ յորդիս.

. . . . . . . . . . . .

digitised by A.R.A.R.@